ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«11» նոյեմբերի 2019թ. № 2/3387-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, Է.ՇՏԱՆԻԿՈՎԻՆ ԵՎ Ս.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2019 թվականի թիվ 37/2019 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները խախտելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ընթացիկ հսկողության թիվ 1 /Արաբկիրի/ բաժնի գլխավոր հարկային տեսուչ Գարիկ Գագիկի Խաչատրյանին, ընթացիկ հսկողության թիվ 3 /Կենտրոնի/ բաժնի հարկային տեսուչ Էրիկ Արթուրի Շտանիկովին և ընթացիկ հսկողության թիվ 10 /Գեղարքունիքի/ բաժնի գլխավոր հարկային տեսուչ Սևակ Դիմիտրիի Պողոսյանին հայտարարել «ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Recoverable Signature

X

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: MASHADYAN RAFIK 3304710108 Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ